Դաս 34. Փոքր Միեր

Ավանդությունը պատմում է, որ Միերը և Քուռկիկ Ձալալին մինչև օրս դեռ կենդանի են: Ավանդությունը պատմում նաև, որ ամեն տարի Համբարձման և Վարդավառի գիշերները Վանա միջնաբերդից ոչ հեռու գտնվող Ագռավու քարը բացվում է, և Միերը դուրս է գալիս քարանձավից՝ փորձելու հողի ուժը: Նա իր ձիով մեկ ժամում քառասուն օրվա ճանապարհ է անցնում: Այդ ամբողջ ընթացքում ձին քարերի վրայով է գնում, հենց որ հողի վրա է ոտք դնում, անմիջապես թաղվում է հողի մեջ: Այդ պահին էլ Միերը «ախ է քաշում» ու կրկին քարայրը վերադառնում: